ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 08.08.2019թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ՍՑ-ՆԳ-2019/120

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի

Մասնակցությամբ՝ «Սեգ» ՍՊԸ-ի տնօրեն՝

Վ. Սեփոյանի (պետական գրանցման վկայական՝ 03Ա283276)

ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 09.07.2019թ. թիվ /26/10292-2019 գրությամբ «Սեգ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. <u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը, Հայաստանի ավտոմոբիլային ճանապարհների տնօրինություն ՊՈԱԿ-ի 12.06.2019թ. թիվ 218-09/301 գրության հիման վրա, 09.07.2019թ. թիվ /26/10292-2019 գրությամբ դիմել է ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին՝ խնդրելով նախաձեռնել «Սեգ» ՍՊԸ-ին (հետայսու նաև՝ Ընկերություն) գնումների

գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. <u>«Սեգ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>

«Սեգ» ՍՊԸ-ի տնօրենը, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2019/120 ընթացակարգի շրջանակներում 19.07.2019թ. ժամը 10:45-ին հրավիրված նիստի վերաբերյալ, ապահովել է իր մասնակցությունը, ով Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին հայտնել է, որ ՊԵԿ-ի կողմից տրված տեղեկանքի համաձայն՝ Ընկերությունը 23.04.2019թ. դրությամբ ժամկետանց պարտավորություններ չունի:

3. <u>Հայաստանի ավտոմոբիլային ճանապարհների տնօրինություն ՊՈԱԿ-ի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

Հայաստանի ավտոմոբիլային ճանապարհների տնօրինություն ՊՈԱԿ-ը (հետայսու նաև՝ Պատվիրատու) ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 12.06.2019թ. թիվ 218-09/301 գրությամբ հայտնել է, որ «Հայաստանի ավտոմոբիլային ճանապարհների տնօրինություն» ՊՈԱԿ-ի կողմից համակարգչային և պատճենահանման սարքավորումների պահեստամասերի և օժանդակ նյութերի ձեռքբերման նպատակով 16.04.2019թ. հայտարարվել է «ՀԱՃ-ԳՀԱՊՁԲ-2019/02» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (հետայսու նաև՝ Ընթացակարգ): 23.04.2019թ. գնահատող հանձնաժողովի կողմից առաջին տեղ զբաղեցնող մասնակից է ճանաչվել «Սեգ» ՍՊԸ-ն: Գնահատման արդյունքում, ՊԵԿ կատարված հարցմանն ի պատասխան՝ 30.04.2019թ. ՀՀ ՊԵԿ-ի կողմից տրամադրված եզրակացությունից պարզ է դարձել, որ «Սեգ» ՍՊԸ-ն, հայտը ներկայացնելու օրվա դրությամբ /23.04.2019թ./ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեցել է օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություն՝48 447 ՀՀ դրամ:

02.05.2019թ. գնահատող հանձնաժողովի որոշմամբ «Սեգ» ՍՊԸ-ի հայտը մերժվել է:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2019/120 ընթացակարգի շրջանակներում 19.07.2019թ. ժամը 10:45-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. <u>ՍՑ-ՆԳ-2019/120 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

ՍՑ-ՆԳ-2019/120 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. Հայաստանի ավտոմոբիլային ճանապարհների տնօրինություն ՊՈԱԿ-ի կողմից իր կարիքների համար կազմակերպվել է «ՀԱՃ-ԳՀԱՊՁԲ-2019/02» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով **<u>23.04.2019թ.</u>** հայտ է ներկայացրել «Սեգ» ՍՊԸ-ն:

2. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 23.04.2019թ. նիստի թիվ 2 արձանագրությամբ կայացված որոշմամբ «Սեգ» ՍՊԸ-ն ճանաչվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից Ընթացակարգի 1-ին, 2-րդ և 3-րդ չափաբաժինների մասով:

3. ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 44-րդ կետի հիման վրա 30.04.2019թ. տրամադրված եզրակացության համաձայն՝ ***«Սեգ» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունի 48 447 ՀՀ դրամի չափով ժամկետանց պարտավորություն:***

4. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 02.05.2019թ. ժամը 12:00-ի նիստի թիվ 3 արձանագրությամբ կայացված որոշմամբ Ընկերության հայտը մերժվել է:

5. ՀՀ պետական եկամուտների կոմիտեի 29.07.2019թ. տեղեկանքի համաձայն՝ «Սեգ» ՍՊԸ-ն 23.04.2019թ. դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով պարտավորություններ չունի:

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 09.07.2019թ. թիվ /26/10292-2019 գրությունը, «Հայաստանի ավտոմոբիլային ճանապարհների տնօրինություն» ՊՈԱԿ-ի 12.06.2019թ. թիվ 218-09/301 գրությունը և կից փաստաթղթերը, գործով առկա նյութերը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ և 6-րդ կետերի համաձայն՝ բացառությամբ սույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք՝

2) որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեն իրենց ներկայացրած գնային առաջարկի մինչև մեկ տոկոսը, բայց ոչ ավելի, քան հիսուն հազար Հայաստանի Հանրապետության դրամը գերազանցող ժամկետանց պարտավորություններ

6) որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե ՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց

հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (հետայսու նաև՝ Կարգ) 32-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ մասնակիցը հայտով ներկայացնում է՝ իր կողմից հաստատված հայտարարություն՝ հրավերով սահմանված մասնակցության իրավունքի և որակավորման չափանիշներին իր համապատասխանութ-յան մասին:

Կարգի 32-րդ կետի 20-րդ ենթակետի համաձայն՝ եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու և (կամ) որակավորման չափանիշները բավարարելու մասին հայտով ներկայացված հայտարարությունները որակվում են որպես իրականությանը չհամապատասխանող կամ մասնակիցը կամ առաջին տեղ զբաղեցրած մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում:

Կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարը էլեկտրոնային փոստի միջոցով Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե (այսուհետ՝ կոմիտե) հարցում է ներկայացնում առաջին տեղն զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների, ինչպես նաև հրավերով «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով մասնակցի անվանումը և հարկ վճարողի հաշվառման համարը:

Կարգի 44-րդ կետի համաձայն՝ Կոմիտեն սույն կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետով նախատեսված հարցումն ստանալու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով տրամադրում է հարցման մասին տեղեկատվություն: Սույն

կետով սահմանված ժամկետում կոմիտեից տեղեկատվության չստացման դեպքում մասնակցի ներկայացրած հայտարարությունները համարվում են իրականությանը համապատասխանող: Եթե կոմիտեի կողմից սահմանված ժամկետից ուշ ներկայացված տեղեկատվությամբ արձանագրվում է, որ առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեցել է օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություններ կամ չի բավարարում հրավերով «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի պահանջները, և պայմանագիրը կնքված չէ, ապա տվյալ մասնակցի հայտը մերժվում է: Եթե սահմանված ժամկետում տրամադրված տեղեկատվության արդյունքում մասնակցի ներկայացրած հայտարարությունը որակվում է իրականությանը չհամապատասխանող, ապա հայտերի գնահատման նիստում հանձնաժողովի որոշմամբ տվյալ մասնակցի հայտը մերժվում է՝ անկախ մասնակցի կողմից կոմիտեի տրամադրած տեղեկատվությունից տարբերվող տեղեկատվություն ներկայացվելու հանգամանքից: Սույն կետով նախատեսված որակավորման չափանիշի գնահատման ժամանակ հաշվի է առնվում սույն կարգի 47-րդ կետով նախատեսված ընթացակարգը:

«Հայաստանի ավտոմոբիլային ճանապարհների տնօրինություն» ՊՈԱԿ-ի կողմից իր կարիքների համար կազմակերպվել է «ՀԱՃ-ԳՀԱՊՁԲ-2019/02» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով **23.04.2019թ.** հայտ է ներկայացրել «Սեգ» ՍՊԸ-ն:

Ընկերության կողմից մասնակցության հայտի թիվ 5 հավելվածով ներկայացված գնային առաջարկի ընդհանուր գինը 1-ին չափաբաժնի մասով կազմել է 50 000 ՀՀ դրամ, 2-րդ չափաբաժնի մասով՝ 40 000 ՀՀ դրամ, 3-րդ չափաբաժնի մասով՝ 160 000 ՀՀ դրամ:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 23.04.2019թ. նիստի թիվ 2 արձանագրությամբ կայացված որոշմամբ «Սեգ» ՍՊԸ-ն ճանաչվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից Ընթացակարգի 1-ին, 2-րդ և 3-րդ չափաբաժինների մասով:

ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 44-րդ կետի հիման վրա 30.04.2019թ. տրամադրված եզրակացության համաձայն՝ ***«Սեգ» ՍՊԸ-ն***

հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունի 48 447 ՀՀ դրամի չափով ժամկետանց պարտավորություն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 02.05.2019թ. ժամը 12:00-ի նիստի թիվ 3 արձանագրությամբ կայացված որոշմամբ Ընկերության հայտը մերժվել է:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ մասնակիցը ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Կարգի 32-րդ կետի 20-րդ ենթակետը սահմանում է, որ եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու և (կամ) որակավորման չափանիշները բավարարելու մասին հայտով ներկայացված հայտարարությունները որակվում են որպես իրականությանը չհամապատասխանող կամ մասնակիցը կամ առաջին տեղ զբաղեցրած մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում:

Այսպիսով՝ «Սեգ» ՍՊԸ-ն «ՀԱՃ-ԳՀԱՊՁԲ-2019/02» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի մասնակցության հայտի թիվ 2 հավելվածով հայտարարել և հավաստել է, որ բավարարում է Ընթացակարգի հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին, մինչդեռ ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից տրամադրված եզրակացության համաձայն՝ Ընկերության հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորության չափը գերազանցել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ մասով նախատեսված գնային առաջարկի մեկ տոկոսի շեմը:

Միևնույն ժամանակ արձանագրում եմ, որ Ընկերության կողմից ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացվել է ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից 29.07.2019թ. տրամադրված տեղեկանքը, որի համաձայն «Սեգ» ՍՊԸ-ն **23.04.2019թ. դրությամբ (հայտը ներկայացնելու օր) հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով պարտավորություններ չունի:**

Այսպիսով, հիմք ընդունելով ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից 29.07.2019թ. տրամադրված տեղեկանքը, համաձայն որի՝ Ընկերությունը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ չի ունեցել հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորություն, գտնում եմ, որ «Սեգ» ՍՊԸ-ն «ՀԱՃ-ԳՀԱՊՁԲ-2019/02» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի շրջանակներում թույլ չի տվել ստանձնած պարտավորության խախտում, ուստի Ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքեր չկան:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 09.07.2019թ. թիվ /26/10292-2019 գրությամբ «Սեգ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**